ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայցեն՝ Շահումյան 1

Հեռ. 2-20-20
Էլ. փոստ. yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

N 271

25.07.2017թ.

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, ուղարկվում է Եղեգնաձորի համայնքի ավագանու որոշումները:

Առդիր 16 թերթ :

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող. աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյան
+374 281 22020,25183

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, 0281 20630, 0281 25183, 0281 25120,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 39*

*18/07/2017 Թ. ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 18/07/2017 թ. թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 3 հա հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
2. Համայնքային սեփականություն հանդիսացող 1.28765 հա հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00117 հա հողատարածքն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին
4. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00192 հա հողատարածքը վարձակալությամբ հատկացնելու մասին
5. Հայաստանի Հանրապետության ՎՁ մարզի Եղեգնաձորի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի եվ դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները եվ իրականացման կարգը հաստատելու մասին
6. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու մասին
7. Համայանքային սեփականություն հանդիսացող հողատարածքը մրցույթով վարձակալության իրավունքով հատկացնելու մասին
8. Համայնքային բյուջեում վերաբաշխում կատարելու մասին
9. Համայնքի ավագանու 17.05.2017թ. թիվ 32 որոշումն ուժը կորցրած ճանաչելու , համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը,աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈ...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020

yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 40

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0383-0172 կադաստրային ծածկագրով, 3 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք , հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :

2. Մեկնարկային գին սահմանել 746800 ՀՀ դրամ :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020

yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 41

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.28765 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԵԿ ԼՈՏՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0338-0007 կադաստրային ծածկագրով, 1.28765 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու վերաբերյալ համայնքապետի առաջարկությանը :

2.Մեկնարկային գին սահմանել 1474360ՀՀ դրամ :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020

yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 42

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00117 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0050-0149 կադաստրային ծածկագրով , 0.00117 հա մակերեսով ,Միկոյան փողոց 13/7/1 հասցեում գտնվող, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամաս ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով Արսեն Սերյոժայի Վարդանյանին վաճառելու :
2. Վաճառքի գին սահմանել 14532 ՀՀ դրամ :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 43

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00192ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 481-րդ, 60-րդ և 81-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ.-ի թիվ 286-Ն որոշման 46-րդ կետի 46.2 -րդ կետի ա ենթակետի պահանջները.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Մոմիկի անվան զբոսայգու տարածքից 10-001-0046-0042 կադաստրային ծածկագրով, 0.00192 հա հողատարածքը տարեկան 23850 դրամ վարձավճարով տրամադրելու Նարինե Սարգսյանին, կառուցապատման իրավունքով՝ ժամանակավոր տաղավար կառուցելու /տեղադրելու /նպատակով , 25 տարի ժամկետով :
2. Առաջարկել Ն. Սարգսյանին ՝ ապահովելու զբոսայգու բարեկարգ ու կանաչապատ վիճակը :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 44-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՁ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը, համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱՂԻԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Եղեգնաձորի համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 18-ի թիվ 44-Ն որոշմամբ

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով /այսուհետ՝ կարգ/ սահմանվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը պայմանները և իրականացման կարգը՝ Եղեգնաձորի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները /այսուհետ՝ պարտադիր բարեկարգում/:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Եղեգնաձորի համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Եղեգնաձորի համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի ,, Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին,, N 596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

10. Եղեգնաձորի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը,

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. Եղեգնաձորի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն,այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների, առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ հողամասի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 5-10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 45

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. թիվ 1918- Ն որոշումը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող Արմենակ Բագրատի Խաչատրյանին պատկանող, Երևանյան խճուղի 1/13 հասցեում գտնվող, 10-001-0385-0003 և 10-001-0385-0005 կադաստրային ծածկագրերով , 0.2279 հա և 0.3421 հա մակերեսներով, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ջրային, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, ջրային, հողերը փոխել նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերի:

Կողմ -7 Դեմ - Ձեռնպահ -0 0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՐՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,

yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 46

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21- րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող , նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման , 10-001-0119-0178 կադաստրային ծածկագրով, Գլաձորյան փողոց 2/9/2 հասցեում գտնվող 0.13036 հա մակերեսով հողամասը, 50 տարի ժամկետով մրցույթով կառուցապատման իրավունքով հատկացնելու:
2. Վճարի մեկնարկային չափ սահմանել 291450 ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

4. ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ

7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 47- Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետի և ,,Բյուջետային համակարգի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքային բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 1100 հազ. դրամ պակասեցնել ավելացնելով օրենսդիր և գործադիր մարմիններ ,պետական կառավարում բաժին 1 խումբ 1 դաս 1 ոլորտի աշխատողների աշխատավարձ և հավելավճար հոդվածին / հոդված 4111 / աշխատավարձի վճարման համար :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 48

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.05.2017Թ. ԹԻՎ 32 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի և ,,Իրավական ակտերի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 17.05.2017թ. թիվ 32 որոշումը :

2.Հաստատել եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն 1 հավելվածի:

3.Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝ համաձայն 2 հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
4. ՌՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ՍՄԲԱՏ
7. ՍՄԲԱՏՅԱՆ ՎԱԼՈՐՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Հաստատված է
Եղեգնաձորի համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 18-ի թիվ 48 որոշմամբ

# *ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
# *Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք*

## կառուցվածքային ստորաբաժանում

1. Ֆինանսական բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

## առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Եղեգնաձորի տարածքային բաժին

Հավելված 2
Հաստատված է

Եղեգնաձորի համայնքի ավագանու

2017թ. հուլիսի 18-ի թիվ 48 որոշմամբ

Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը -20
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 274540 |
| ...խատակազմի քարտուղար | 1 | 263250 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 2 | 145040 |
| *ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ* | | |
| Բաժնի պետ | 1 | 261540 |
| Գլխավոր մասնագետ | 1 | 165630 |
| Առաջատար մասնագետ | 3 | 145040 |
| *ՔԿԱԳ ԲԱԺԻՆ* | | |
| Բաժնի պետ | 1 | 256623 |
| Բաժնի առաջին կարգի մասնագետ | 1 | 133602 |
| *ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ* | | |
| Բաժնի պետ | 1 | 261540 |
| *ԱՇԽԱՏԱԿԱԶՄ* | | |
| Գլխավոր մասնագետ- գլխավոր ճարտարապետ | 1 | 165630 |
| Գլխավոր մասնագետ – իրավաբան | 1 | 165630 |
| ...ռաջատար մասնագետ | 1 | 145040 |
| Առաջատար մասնագետ | 1 | 145040 |
| *ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | |
| Գործավար | 1 | 102150 |
| Քարտուղարուհի | 1 | 102150 |
| Վարորդ | 1 | 102150 |
| Հավաքարար | 1 | 102150 |

Համայնքապետ Գ. Հարությունյան